Մրցույթ՝ ՀՀ Լոռու մարզի «Պետրովկայի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի դասվարի/29 դասաժամ/, աշխարհագրության/6 դասաժամ/, քիմիայի/6 դասաժամ/, կենսաբանության/5 դասաժամ/, ֆիզկուլտուրայի/14 դասաժամ/, երաժշտության/2 դասաժամ/, հայոց եկեղեցու պատմության/2 դասաժամ/, բնագիտության/1 դասաժամ/, իմ հայրենիքի/2 դասաժամ/, հասարակագիտության/3 դասաժամ/ , տեխնոլոգիայի /3 դասաժամ/, կերպարվեստի /3դասաժամ/ ուսուցիչների թափուր տեղերի համար

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝
- դիմում (ձև 1),
- 1 լուսանկար 3x4 չափի,
- Բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ (դիպլոմ),
- Անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- Ինքնակենսագրություն (ձև 5),
- Այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
- Հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- Որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են 2024թ փետրվարի 24-ից մինչև ս/թ մարտի 11-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 9:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային այլ օրերից:

Մրցույթը տեղի կունենա **2024 թ. մարտի 14-ին՝ ժամը 12:00-ին**, Պետրովկայի հիմնական դպրոցում, հասցե՝Լոռու մարզ,գ.Պետրովկա,2փ.,1նրբ.,2տ: Տեղեկությունների համար զանգահարել 093052644 հեռախոսահամարով: